**Արձանագրություն N 2-2**
**<<ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/2>> ծածկագրով համակարգիչների ձեռքբերման**
**գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 23.08.2021թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տ. Ղուկասյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Լ. Սարիբեկյան |
| | Լ. Խալաթովա |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Նիկոլայան |

**1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին**

---

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված կարգով, 19.08.2021թ. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի, eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է հայտում առկա անհամապատասխանությունների մասին և առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակիցը ոչ մի փաստաթուղթ չի կցել, իսկ տեխնիկական բնութագիր դաշտում լրացրել է հայտով ներկայացրած տեխնիկական բնութագիրը: Հայտում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումները 20.08.2021թ. հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացվել է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tener4@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**2. Ընտրված մասնակցի մասին**

---

(Տ. Ղուկասյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, գնահատող հանձնաժողովի քարտուղարի tener4@minurban.am էլ. փոստին ուղարկված շտկումները և գնահատման թերթիկները՝ Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի հայտը գնահատել բավարար:

2.2 Ընտրված մասնակից ճանաչել Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժային:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

---

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժային:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________ Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ________________ Լ. Սարիբեկյան

________________ Լ. Խալաթովա

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Ն. Նիկոլայան